



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2662

14188

~~v137~~

~~1392~~ 2662
257

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴ ԳԱՏՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Թ. ԱԼ, ԱՍՈՒ



ԿԸՆՈՆԸԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԹԱԼԱՍՈՒ

Ի ԿԵՍԵՐԻԸ

ՀԱՍՏԱՏԵԱԼ

ՀՐԱՄԱՆԱԻ Տ. Տ. ՅԱԿՈԲԱՅ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐԲԻ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ՅԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ԿԵՍԱՐԻՈՅ ՎԱՆՈՒՅ ՍՐԲՈՅ ԿԱՐԱՊԵՏԻ

Տ. ՅԱԿՈԲԱՅ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՏՊԱԳՐԵՅԱԻ ԱՐԴԵԱՄԲԲԻ ԵՒ ԾԱԽԻԻՐ

ԳԵՐԱՊԱՏԻ ՄԱՀՏԵՍԻ ՄԱՆՈՒԿ ԱՂԱՅԻ

ՄԱՆՈՒԿԵԱՆ

1849 ՅՈՒՆՎԱՐ 1.

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ

=ՌՄՂԸ=

14188

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

540 EAST 57TH STREET, CHICAGO, ILL.

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

1950

Լ. Օ. Գ

Կեսարիոյ Թալաս գիւղին մէջ հաստատուած Սամիկոնեան Ընկերութեան և անոր Վարդ Պատրիկեան վարժարանին համար գրուած սաներկայ Կանոնագրութիւնը՝ տակաւին Ազգին մէջ՝ մանաւանդ Կեսարիոյ կողմերը շատերուն պէտք եղածին չափ մեր աշխարհաբառ լեզուին ծանօթութիւն չունենալուն պատճառաւ Տաճկերէնի ալ թարգմանուելով, Հայերէն աշխարհաբառն ալ Տաճկերէնն ալ զատ զատ տետրակներով հրատարակուեցան, որ Հայերէն ուզողը Հայերէնը առնէ Տաճկերէն ուզողը Տաճկերէնը, կամ երկուքը մէկ տեղ ուստի այս տետրակներէս առնել ուզողը կրնայ գտնել Ընկերութեան խորհրդարանը և կամ Ընկերութեան անդամներէն մէկը տեսնելով կրնայ անկէց ստանալ:

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

ՄԸՄԻԿՈՆԵԸՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՈՐ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՕԼԻՍ

Յովհաննէս աղա Կ. Այլապետանց = (Նախագահ)

Դատել աղա Սեբեան =

Գեորգ աղա Խախամաճեան =

Յարո-լի-ն աղա Սժճեան =

Քրիստոսաբո-ր աղա Ղազարոսեան =

Միրպիչ աղա Աշաբօն =

Մահպետի Աբրահամ աղա Սաղըրեան =

Սենեքերիմ աղա Տահպետի Սանոնիեան =

Յովհաննէս աղա Աի-ժի-շեան =

Յովհաննէս աղա Քապուլիմալեան =

Յարո-լի-ն աղա Քալեաճեան =

Յարո-լի-ն աղա Արապեանեան = (Գանձապետ)

Յահիբ աղա Պեյլերեան =

ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՔ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ո Ր Ի Կ Ե Ս Ա Ր Ի Ա

Մահաբեւի Պօղոս աղա Սէրեան :	(Փոխանորդ նախագահի)	
Յովհաննէս աղա Թիւրապեան :	(Ներքին պետու)	
Մահաբեւի Լբրահամ աղա Սրամայօլեան :		”
Մահաբեւի Լեւոնի աղա Արարիկեան :		”
Մահաբեւի Մանուկ աղա Մանուկեան :		”
Մահաբեւի Արարիկ աղա Արարիկեան :		”
Մահաբեւի Ղասայար աղա Ղասայարեան :	(Ղանչապետ)	
Յովհաննէս աղա Սէրեան :	(Ըրպաչին պետու)	
Սպեհան աղա Թիւրապեան :		”
Մահաբեւի Ղրիգոր աղա Արարիկեան :		”
Մահաբեւի Արարիկ աղա Արարիկեան :		”
Մահաի աղա Մալեան :		”
Մարտիրոս աղա Պալեօլեան :		”

Օղուգուծիւնն է մայր բա
րեաց և անղուգուծիւնն ծնող
չարեաց : (Եւէէ)

Ի մանկուծեան քում ընտ
րեա՛ զուսումն , և մինչև ՚ի ծե
րուծիւն գտանես զհանձար . . .
յամենայն մտաց մատիր գու առ
նա , և յամենայն զօրուծենէ
պահեա՛ զճանապարհս նորա . . .
և ՚ի վախճանի գտցես զհանգիստ
նորա : (Սէրաք)

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴ ՊԱՏՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Թ Ա Լ Ա Ս Ո Ւ

Քանի որ ազգին մէջ ուսմանց և գիտութեանց՝ ամէն աստիճանէ մարդկանց ալ ունեցած օգտակարութիւնը և անժխտելի պիտանութիւնը ազէկ ճանչցուեցաւ, Հայաստանի ամէն կողմերը և գրեթէ մեր ազգէն գտնուած ամէն տեղեր, գոյացած ընկերութիւններուն՝ վարժարաններուն՝ և ամէն տեսակ ազգային յառաջադիմութեան նպաստող միջոցներուն թիւը առաւել շատցաւ, և բոլոր ազգին մէջը արտաքոյ կարգի փոյթ մը կայ ուսումնական՝ գիտուն՝ խելացի՝ և ամէն պիտանի բաներու տեղեակ զաւակներ հասցընելու և բոլոր միտքերը հարստացընելով ազգին և իշխող տէրութեան օգտակար անդամներ ըլլալու :

Ուստի ահա այս ոգւով, այս ուսումն

Նասիրութիւնք և հայրենասիրական գեղեցիկ նախանձաւորութեամբ վառուած Վերապատիւ Վարդ Պատրիկեան Ազգասէր աղաներն իրենց արդար վաստակովը ուղեցին, իրենց բնակած՝ Կեսարիոյ թալաս գիւղին մէջ սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյն քով հոյակապ քարուկիր վարժարան մը շինել, Ազգին մէջ՝ մանաւանդ Հայաստանի մէջ իրենց ճշմարիտ հայրենասիրութեանը անեղծական յիշատակ մը կանգնելու մըտքով: Եւ երբ որ Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանուց առաջնորդ Արքազան Յակոբ Արքեպիսկոպոսին խորհուրդներն ալ իրենց յարմար գտան, այս վարժարանը շինեցին լրմնացուն պէտք եղածէն շատ մէկ գերազանց և յարմար շէնքով մը բնութեան բարիքներով և օգին առողջութեամբը ախորժելի դիրքի մը վրայ, և ազգին նուիրեցին, և Վարժարանին անունն ալ իրենց դիւցազնական գործին մէկ յաւերժական յիշատակ մը ըլլալու համար Վարդ Պատրիկեան վարժարան ըսուեցաւ:

Եւ որովհետեւ սասանկ մէկ վարժարան մը ըստ արժանւոյն տարեկան ծախքը հոգալով կառավարելն ալ ծանր բան մըն է, և մէկ կամ երկու հոգւով լրմննալու բան չէ, անոր համար Արքազան Առաջնորդը՝ բարերար Ազաները՝ և բոլոր տեղացիք խորհեցան որ ընկերութիւն մը կազմեն զանի կա-

ուսմանը համար, և այս ընկերութեան
 նրա անունն ալ դրին մեր Վամիկոնեան
 հռչակաւոր նախարարութեան անուամբը
 Վամիկոնեան Րնկերութիւն, որուն գործը
 առ այժմ պիտի ըլլայ միայն Վարդ Պատրի-
 կեան վարժարանը կառավարել, բայց երբ
 որ ընկերութիւնը հարստանայ և իր ուժը
 բաժանելու չափ բաւական կարողութիւն
 ստանայ՝ ուրիշ տակաւին շատ ազգօգուտ
 գործերու ալ ձեռնամուխ ըլլալու կր խոս-
 տանայ :

Այսչափ խորհուրդները և տնօրէնու-
 թիւնները իրենց մէջը ընելէն ետև գոր-
 ծադրութեան և վաւերական հաստատուե-
 լուն հրամանին համար կոստանդնուպօլիս
 ծանուցանելով, Վեհափառ Սրբազան Յա-
 կոբ Արքեպիսկոպոս ազգասէր Պատրիարք
 հայրերնուս բարձր հրամանաւը և ազգա-
 յին Վերագոյն և Հոգևոր ժողովքներուն
 և բոլոր ազգապետ ամիրայներուն հաւա-
 նութեամբը, որ ըսել է ազգին ընդհան-
 րութեան հաւանութեամբը հաստատուե-
 ցաւ, և այս Րնկերութեանս և Վարժա-
 րանիս վերաբերեալ պինտ հարկաւոր կա-
 նոնները և սահմանադրութիւնները հի-
 մակու հիմա սա հետեւեալներս են :

Բ Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Մ ամիկոնեան ընկերու թիւնը հա-
յոց ազգին համար հաստատ
ուած ըլլալով, ընկերութեան բոլոր անդամ
ները և ստորագրուողներն ալ հայազգի
պիտի ըլլան :

2. Բնկերութեան ստորագրուելուն
մէկ բաժինը ամիսը երեք ղուռուշ է, ե-
ռամսեայն ինը ղուռուշ որ ըսել է տարե-
կանը երեսունը վեց ղուռուշ :

3. Ամէն ստորագրուող տարեկանը վը-
ճարելով ամէն տարեգլուխ մէյմէկ անգոր-
րագիր պիտի առնէ, բայց այս՝ վճարողնե-
րուն ոմանց ծանր ըլլալուն համար ուզողը
երեք ամիսը անգամ մը իննական ղուռուշ
վճարելով չորս անգամին տարեկան վճարե-
լէքը լըմնալու է, իսկ ամսական վճարող-
ները խիստ քիչ պիտի ըլլան և ան ալ կա-
րողութիւն չունեցողներուն համար է :

4. Թէպէտև ասանկ մէկ ընկերութեան
մը համար ամսական որոշուած բաժինը
խիստ քիչ է, բայց այս ալ գիտնալու է որ՝
չափ չի կայ, մէկ ստորագրուող մը մէկէն
բռնելով մինչև հարիւր, կամ ալ աւելի բա-

ժին կրնայ ստորագրուիլ, այս ամէն մարգուէն խղճմտանքէն և կամքէն կախումն ունի, բռնութիւն չի կայ որ սիրով ըլլայ :

5. Նաև մէկ տան մէջ գտնուող ամէն մէկ հոգին ալ կրնայ ստորագրուիլ որ սեռէն կ'ըլլայ նէ թող ըլլայ, թէ այր և թէ կին խտրութիւն չկայ :

6. Արովհետև այս ընկերութեան գործը առ այժմ վարժարանին պէտքերը հոգալ է ըսինք, ուստի մէկէն բռնելով մինչեւ քանի բաժին ստորագրուելու կարողութիւն ունին նէ իւր կարողութեանը համեմատ ընկերութեան չստորագրուողին տրդան վարժարան չի պիտի ընդունուի, և մէկը ընկերութեան ստորագրուած ըլլալով տղան վարժարան տալ ուղէ և տեղն ալ հեռու՝ այսինքն ուրիշ գեղէ ըլլալով իրիկուն առտու չի կրնայ երթալ գալ նէ՝ ընկերութիւնը անանկներուն գիշերուան ծախքն ալ պիտի հոգայ :

7. Անսական ստորագրողներէն ՚ի զատ թէ որ մէկէ մը թէ այր ըլլայ և թէ կին՝ ընծայ մը կտակ մը կամ որ և իցէ պարգև մը որ ըլլալու ըլլայ կ'ընդունուի, և անոր պէտք եղած շնորհակալութիւնները և բարեմաղթութիւնները ըլլուելէն ետեւ արձանագրութեան մէջ անցնելով ընկերներուն ալ իմաց կը տրուի կամ օրագրի միջոցաւ և կամ առանձին յայտարարութեամբ :

8. Եւ որովհետեւ ասանկ ազգային գործերը մեծ զգուշութեան կարօտ է, անոր համար բոլոր ստորագրւողները և ըստորագրուիլ ուղղոյնները վստահ ընելու համար ընկերութիւնը որոշած է ամէն տարուան վերջը Տարեգիրք մը հրատարակել, որուն մէջը պիտի գտնուին, բոլոր ստորագրուողներուն անունը վերէն ՚ի վար իրենց ստորագրուած բաժիններովը մէկ տեղ. եղած ընծայները, կտակները, և բոլոր ուրիշ մուտքերը, ծախքերուն ցուցակը, բոլոր ելումմուտի հաշիւները, յառաջ բերած պտուղները, ուսանողներուն թիւը և անունները, և այս տետրակներէն ամէն ընկերներուն ալ պիտի տրուի որ՝ ընկերութիւնը գաղտնի բան չունենայ: Աստի հիմակ վրէնէ կը հրաւիրենք համազգի ստորագրւողները, որ այս ընկերութեանս արդիւնաւոր ըլլալուն վրայ տարակոյս չունենալով՝ գեկտեմբերի առաջին անգամ հրատարակուելիք Տարեգիրքին մէջ իրենց անունն ալ տեսնալը պատիւ համարին:

9. Սամիկոնեան ընկերութիւնը մէկ նախագահէ մը և մէկ նախագահի փոխանորդէ մը ՚ի զատ գրեթէ 24 ալ խորհրդական անգամ պիտի ունենայ և ընկերութեան բոլոր հոգաբարձուիլ կամ կառավարուիլ ասոնց ձեռքը պիտի ըլլայ, թէպէտ և այս խորհրդականները իրենց սաշտօնին մէջ գուր

սէն մէկ մէկ ալ օգնական կրնան ունենալ :
 10. Այս բան և չորս խորհրդական
 անդամներուն ընդհանրապէս 12ը կոստան
 դընուպօլիս պիտի ըլլայ և 12ը կեսարիա :

11. Մամիկոնեան ընկերութիւնը 24
 խորհրդական անդամներէն ՚ի զատ անորոշ
 թուով ալ պատուոյ անդամներ պիտի ու
 նենայ , և ասոնք ալ բաժանորդ ընկերներէն
 պիտի ըլլան :

12. Ընկերութեան բոլոր պաշտօննե
 րուն համար որոշուած մարդիկը խորհրդ
 դական կամ պատուոյ անդամներէն պիտի
 ըլլան և պաշտօննուն տեւականութիւնը
 մինչև տարի մը պիտի ըլլայ , այս պաշտօն
 ներն են , նախագահի փոխանորդ , գանձա
 պետ , ներքին տեսուչներ , արտաքին տե
 սուչներ , և ուրիշ ինչ պաշտօնի համար որ
 տակաւին պաշտօնատար պէտք ըլլայ :

13. Երբ որ ընկերութիւնը ուղէ , և
 պաշտօնատարն ալ հաւանի՝ տարիէ մը ետև
 մի և նոյն պաշտօնատարը կրնայ կրկին հաս
 տատուիլ իր պաշտօնին կամ ուրիշ պաշտօ
 նի վրայ :

14. Արովհետև խորհրդականներուն
 որոշածը ընկերութեան որոշածը ըսելէ , ա
 նոր համար խորհրդական անդամներուն
 պարտաւորութեանց մէկն ալ աս է որ՝ թէ
 Պօլիս ըլլան և թէ կեսարիա երբոր մէկ
 գործով մը հարկ ըլլայ ասոնցմէ կողմնական

ստորագրու թիւն ուղուիլ, ամենեւին երկու կողմին ալ ստորագրու թիւն չի պիտի տան մինչեւ որ բուն տեղէն կամ մեծերուն կողմէն առանձին նամակաւ ստորագրու թիւն չուղուի. և ան ժամանակն ալ ժողովք ընելով բոլոր խորհրդականներուն հաւանութեամբ ճշմարտութիւնը որ կողմն է նէ այն պիտի ստորագրեն :

15. Թէ Պօլսոյ և թէ Կեսարիոյ խորհրդականները միշտ երեւելի խորհուրդները իրարու պիտի հարցնեն որ ընդհանուր ընկերութեան հաւանութեամբ եղած ըլլայ :

16. Խորհրդական անդամներէն կամ պատուոյ անդամներէն մէկը թէ ընկերութեան և թէ վարժարանին վերաբերեալ, կամ որ և իցէ առաջարկութիւն մը կամ խնդիր մը որ ունենալու ըլլայ՝ գրով խորհրդարանին պիտի ներկայացնէ և ամէն խորհրդականներէն հաւանութիւն տրուի նէ ՚ի գործ պիտի գրուի : Նաև կրնայ ընկեր մը կամ խորհրդական մը ընկերութեան՝ վարժարանին՝ պաշտօնատարաց՝ կամ որ և իցէ բանի մը համար տրտունջ մը ունենե՛նալ, որն որ առանց ասդին անդին թըշնամական խօսքեր ընելով ընկերութենէն հեռու պտըտելու՝ կրնայ խորհրդարանին բողոքել կամ առաջարկել. և թէ որ իրաւացի է՝ բողոքը կ'ընդունուի, իսկ թէ որ ա-

88/41
 «նիրաւ՝ բողոքքը կը յանդիմանուի: Վերջապէս ընկերութեան էն մեծ պաշտօնատարէն բռնելով մինչև էն յետին ընկերքը երբոր ընկերութեան կամքին դէմ կամ անոր օգտին դպչելու գործի մը մէջ կը գտնուի, ընկերութիւնը ժողովք ընելով իսպառ պիտի արտաբսուի անանկ մարդը ընկերութենէն:»

17. Մենք ընկերութենէն դուրս եղողները բնաւ ընկերութեան մէկ գործին ալ միջամուխ չեն կրնար ըլլալ և ամենեւին ըլլալու ալ իրաւունք չունին, կամ թէ որ դուրսէն մէկ մը այս կանոնիս դէմ յանդգնելով ընկերութեան մէկ փոքր իրին անգամ դպչելու ըլլայ կամ բանիւ և կամ գործով, ընկերութիւնը պարտաւոր է անոր դէմ ինքրզինքը պաշտպանելու:»

18. Մենք հանրապէս ընկերութեան երևելի գործերուն տնօրէնութիւնը Պօլիսէն ըլլալով՝ նախագահն ալ Պօլիսէն պիտի ըլլայ ազգին ամիրայներէն կամ երեւելիներէն մէկը, ուստի վարժարանին ներքին կացութիւնն ալ միշտ աչքի առջեւ ունեցող մը և Վեսարիոյ խորհրդարանին ալ մեծ մը գտնուելու համար Վեսարիա փոխանորդ մը պիտի ունենայ:»

19. Խորհրդականները խորհրդի մը վերայօք երկուքի որ բաժնուելու ըլլան, որ կողմինը ընդունելի ըլլալը որոշողը նախագահը կամ նախագահի փոխանորդը պիտի

ըլլայ, բայց այս ալ պիտի նայուի որ շատը
ինչպէս կ'ուզէ :

20. Խորհրդական անդամներէն մէկ քա-
նին արտաքին տեսուչ պիտի ըլլայ, որոնց
գործը պիտի ըլլայ ընկերութեան ստորագ-
րուողները շատցընել, բաժանորդներէն ա-
ռածներնին խորհրդարանին բացուած օրը
ընկերութեան գանձապետին յանձնել և ա-
նոնց անդորրագրերը գանձապետէն համ-
րանքով պիտի առնեն և իրենց ձեռքովը ե-
ղած գործերուն վրայօք ճիշդ հաշիւներ պի-
տի տան, ասոնք թէ որ ուզեն կրնան իրենց
մէկմէկ օգնական ունենալ :

21. Իսկ արտաքին տեսուչ չեղող կամ
ուրիշ պաշտօն չունեցող խորհրդականները
ներքին տեսուչ պիտի ըլլան և ասոնց գոր-
ծըն ալ վարժարանին ներքին իրերը դիտել
և խորհիլ է, ասոնք ամէն ուրբաթ ան-
պատճառ գտրոց պիտի գան, թէպէտև ար-
տաքին տեսուչները չի կրնան գալ, և տղոց
չարաթական օրագրութիւնները պիտի նա-
յին, և վարժապետն ալ զուրցելիք մը ու-
նի նէ ասոնց պիտի զուրցէ, բայց կրնայ
նաև պատուոյ անդամներէն ալ ուզողը ներ-
քին տեսուչներուն հետ կամ առանձին ու-
զած ժամանակը վարժարան գալ պտրտիլ և
տեսած պակասութիւնները առանց ուրիշ
ներուն բան մը ըսելու ուղղակի խորհրդա-
կաններուն իմացընել :

22. Կեսարիոյ խորհրդականները ուրբաթ օրու ընէ 'ի զատ նաեւ կիրակի օրերը եկեղեցւոյն աւարտումէն ետեւ վարժարան պիտի գան, ընկերութեան և վարժարանին վերաբերեալ խորհուրդներու և անօրէնութիւններու համար, կամ մասնաւոր քննութիւններու համար. և քննութիւն եղած կիրակիները կրնան նաև պատուոյ անդամներուն և տղոց հայրերուն ալ իմաց տալով դպրոց հրաւիրել որ անոնցմէ ուզողներն ալ գտնուին: Այլ որովհետեւ վարժարանը կիրակի օրերը դաս չի կայ և միայն ուրբաթ օրերն ալ գալով ըստ արժանւոյն ընթացքը չի գիտցուիր, անոր համար ժամանակ ժամանակ ներքին տեսուչներէն կամ պատուոյ անդամներէն մէկ քանին՝ շաբթուամէջ ալ առանց իմաց տալու անակնկալ առտեն վարժարանը գալով պիտի նային օրէնքներուն անընդհատ գործադրութեանը և ուսմունքներուն շարունակութեանը:

23. Իսկ Պօլսոյ խորհրդականներն ալ որոշուած օր պիտի ունենան խորհրդի համար, կամ խորհուրդ ընելու հարկ եղած ժամանակը բոլոր խորհրդականներուն ալ առանձին գրով իմաց պիտի տրուի, և թէ որ նախագահը ամէն խորհրդի ներկայ չի կրնայ գտնուիլ նէ՝ իրենք խորհուրդնին ընելով իրենց որոշմունքը նախագահին պիտի ներկայացընեն, և թէ որ ան ալ հաստա-

տէ նէ 'ի գործ պիտի դրուի :

24. Խորհրդական անդամներէն երկուքն ալ գանձապետ պիտի ըլլան՝ մէկը Պօլիս և մէկը Կեսարիա, որ ընկերութեան և վարժարանին ելումուտին հաշիւները պարտաւոր են ճիշդ բռնել որ պէտք եղած ժամանակը կարող ըլլան հաշիւ տալ :

25. Պօլսոյ գանձապետը խորհրդականներուն գիտութեամբը Պօլիս ժողովուած ընկերութեան աւելորդ ստակը Կեսարիա պիտի խրկէ որ 'ի գործ դրուելով ընկերութեան աւելի շահաբեր ըլլայ դատարկ չի մնայ, կամ Կեսարիոյ խորհրդարանին յանձնարարութեամբը Պօլիս մէկու մը յանձնէ ամսական շահը որոշելով, և ամէն պարագաներուն վրայօք անկէց գիր մը առնելով :

26. Ամէն տարեգլուխ հին հաշիւը գոցելով նոր հաշիւ բանալու ժամանակ բոլոր խորհրդականներուն պարտաւոր է գանձապետը հաշիւ ցրցունել, և անոնց ամէնուն ալ ստորագրել տալ, որ անոնց ալ գիտութեամբը եղած ըլլայ :

27. Առանց գանձապետին գիտութեանը սովորականէն աւելի փարայի մը ծախք չի պիտի ելլելոյ, որ ընկերութեան կարողութենէն վեր բան չըլլայ :

28. Արկու խորհրդարաններն ալ ամէն մէկ գիտութեան արժանի բաները միշտ իրար պիտի ծանուցանեն, մանաւանդ Կեսա-

ըիոյ խորհրդարանը բոլոր ստորագրուողները՝ եւբը , մուտքը , ամէն դիպուածները և վարժարանին բոլոր պարագայները մանրամասնաբար տարեգլխին մօտ Պօլիս պիտի խրկէ , որ երկու հաշիւները մէկ ըլլալով տարեգրքին մէջ պակաս բան չի գտնուի :

29. Թէ կեսարիոյ և Թէ Պօլսոյ խորհրդարանները որչափ նախագահի և նախագահի փոխանորդը խորհրդի գլուխ ունին ալ նէ , Մամիկոնեան ընկերութեան անուանը մէկ մէկ ալ կնիք պիտի ունենան չորսական կտորէ բաղկացած , և ասոնց ամէն մէկ կտորները չորսական հաւատարիմ խորհրդականներու քով պիտի ըլլան , և բանի մը որոշում տրուած ժամանակը այս չորսսերուն մէկ տեղ գտնուելովը պիտի կնքուի , չէ նէ ընդունելի չըլլար :



Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ի Ն

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր Ը

1. Նախ վարժարանին մէջ դրուած բոլոր վարժապետներուն և դասատուներուն ինչ կարգ կանոն կը ցուցուի նէ՛ ան ոճով իրենց դասատուութիւնները ամէն օր անընդհատ պիտի շարունակեն, որ մասնաւոր քննութիւններէն ՚ի դատ նաեւ կարող ըլլան վեցամսեայ և տարեկան ընդհանուր քննութիւններուն մէջ ալ բոլոր աշակերտները իրենց սորված դասերուն մէջ պարզերես հանդիսացնել:

2. Ամէն դասատու իր դասին բոլոր տղոցը օրագիրը պիտի բռնէ, թէ վարքերնուն և թէ ուսմունքներնուն մէջ անոնց օրական աստիճանները արդարութեամբ ուր շէլով, և ուրբաթ օրերը հոգաբարձուաց եկած ժամանակը անոնց ժողովքին ներկայացնէ, և նայուելէն, ու վատերուն՝ պէտք եղած խրատները և յորդորանքները տրուելէն ետեւ կառավարիչ վարժապետին յանձնուի որ շաբաթական օրագիրը անցընէ, որ ետքը ամիսը անգամ մը նայուած ժամանակը յառաջագէմներուն իրենց աստիճանին համեմատ պէտք եղած պատիւները

տրուի, և վատերն ալ պատիժ և յանդիմանութիւն կրեն :

3. Բոլոր դասատուները պարտաւոր պիտի ըլլան իրենց ամէն պարտքերը ՚ի գործ դնել, զանազան պատճառներով դպրոցէն օրերով հեռու չի մնալ, և պակասութիւն մը չունենալ, և ամենայն կերպով իրենց հըրամայուած գործերը ջանալու են կատարել, և իրենց նպատակը՝ որ է վարժարանին յառաջագիմութիւնը, աղէկ տպաւորած պիտի ըլլան իրենց մտքին մէջը :

4. Մինչեւ որ տղայ մը դպրոց մտնալու համար հոգաբարձուներէն ձեռքը յանձնարարութեան գիր չունենայ՝ վարժապետը դպրոց չի պիտի ընդունի. ուստի տղայ մը վարժարան մտնալու համար պէտք է հայրը կամ մեծը նոյն տղան հոգաբարձուաց ժողովքին ներկայացընէ, և անոր վրայ պէտք եղած խօսքերը և քննութիւնները ըլլուելէն ետեւ հրամանագիր մը առնէ :

5. Այս հրամանագրովս տղայ մը դպրոց երթալուն պէս՝ տղուն աստիճանը ինչ է նէ անոր համեմատ կարգի մը մէջ գընէ վարժապետը :

6. Մամիկոնեան ընկերութեան ընկեր եղողին խօսք չիկայ, բայց ան որ կարողութիւն չունենալուն համար ընկեր գրուած չէ և կ'ուզէ վարի թաղին սուրբ Արքայ դութեան եկեղեցւոյն դպրոցէն հանելով

այս վարժարանը տալ նէ , պէտք է նոյն դպրոցին հոգաբարձուներէն հաւանութեան գիր ունենայ . չէ նէ ընկերութիւնը չընդունիր :

7. Աշակերտ մը այս վարժարանս մըտնալէն ետեւ պարտաւորութիւններուն առաջինը սեպուած է ամէն առտու կանուխ եկեղեցի գալ , ձայնաւորները դասերուն մէջ և միւսները իրենց համար յատկացած տեղը կայնելով մինչև եկեղեցւոյն աւարտումը ջերմեռանդութեամբ աղօթել . հինգ տաղաւարներուն կամ գոնէ երեքին վարժարանին խոստովանահօրը խոստովանալը ըլլալէն ետեւ ապաշխարեն և հաղորդութիւն առնեն . վերջապէս բոլոր տղաքը իւրենց կրօնքնուն վրայ մեծ փոյթ պիտի ունենան :

8. Ամէն առաւօտ եկեղեցւոյն աւարտմանը կառավարիչ վարժապետը բոլոր տղաքը կարգաւ վարժարան բերելուն պէս խաղալիք բաներ չի գտնուելու համար ամէն տղուն վրայ նայուելէն ետեւ , ամէն մարդիւր յատկացեալ տեղը պիտի նստի . և առաւօտեան աղօթքը միաբերան ըսուելէն ետեւ իւրաքանչիւր տղայ իւր գործին և սերտողութեանը պարապի՝ մինչև որ դասի ժամանակ գայ :

9. Արբոր դասերուն ժամանակը կուգայ , կառավարիչ վարժապետը ժամանակա-

գրութեան ցուցակը նայելով իւրաքանչիւր կարգին տղաքը իրենց ժամանակին կարգաւ դասարանը կը խրկէ, ուր տեղ պէտք է դասատուն ներկայ գտնուի և որոշեալ միջոցին իւր դասը տայ, որ ժամանակը լրանալուն երբոր կառավարիչը զանգակով վեր հըրաւիրէ՝ իսկոյն ելլան որ դասերուն խանգարում չըլլայ :

10. Վարժարանին մէջ առ այժմ սորվելիք ուսմունքներն են, Ա. Հասարակ ընթերցմունք, Բ. Քրիստոնէական վարդապետութիւն, Գ. Հայկաբանութիւն, Դ. Տաճկերէն, Ե. Վաղղիերէն, Զ. Թուաբանութիւն, Է. Աշխարհագրութիւն, Ը. Պատմութիւն սուրբ Վրոց, ազգային և արտաքին, Թ. Վեղեցկագրութիւն, Ժ. Լրաժշտութիւն : Այս տասը ուսմունքներուն թէպէտ թիւը շատ կ'երեւայ, բայց տղայ մը քերականութեան սկսած օրէն հաշուելով չորս տարուան ընթացքին մէջ բաւական կրնայ յառաջացրնել թէ որ սորվեցրնելու եղանակը դիտուելու ըլլայ :

11. Երբոր մէկ տղայ մը հասարակ ընթերցանութիւնը և պարզ թուելը բաւական յառաջացրնելով քերականութեան սկըսելու՝ որով և ուրիշ ուսմանց ալ կարգը մանելու կ'ըլլայ, պէտք է տղուն հայրը ընկերութեան թուղթ մը տայ՝ որ մինչև չորս տարի՝ տղուն ուսմունքը կ'իսատ թողլով

տղան վարժարանէն չի հանէ :

12. Ամէն տղայ իր սորված դասերէն ետ չի մնալու համար ամէն օր անպատճառ դպրոց պիտի գայ , և որովհետեւ գալէն ետև ալ դուրս ելլալու հրաման չի կայ՝ անոր համար հացերնին ալ հետ պիտի բերեն :

13. Առջի օրը վարժարան չեկող տղան հետևեալ օրը որ վարժարան գայ՝ պատիժ պիտի կրէ . ուստի տղայ մը հարկէ մը ստիպուած այն օրը չի կրնայ գալ նէ , պէտք է նոյն օրը առտուանց վարժարան գալով կամ առջի օրվրէ կարավարիչէն հրամանաւ գիր առնէ , որ ետքը հարցուած ժամանակը ցրցունելով հրամանով եղած ըլլալը գիտցուի :

14. Ղաշու զանգակը զարնուելուն պէս կարգաւ բոլոր տղայքը սեղանատուն իջնան , և յատկացած աղօթքը ըսուելով սկըսեն ճաշերնին ուտել , և մինչև ճաշերնին լամբնայ նէ ալ՝ սեղանատունը կարգացուած բարոյ յական խրատները կամ պիտանի տեղեկութիւնները մտիկ ընելէն ետև գոհութեան աղօթքնին մատուցանելով , ուսումնական տղայքը յատկացեալ ժամանակաւ որոշուած տեղը իրենց զբօսանքն ալ ընելէն ետև վեր ելլեն և սկըսին կրկին գործերնին շարունակել :

15. Ամէն տղու ճնողք՝ տղուն մարրութեանը վրայ ալ մեծ հոգ պիտի ունենան , որ

չաբաթը անգամ մը ձեռքերնին ըղունքնին
և այլն նայուած ժամանակը անարգանք չի
կրրեն :

16. Տղոց քաղաքավար՝ քաղցրաբարոյ
ըլլալուն զգուշութիւնը միայն վարժարա-
նին մէջ չըլլալու համար, ծնողքներն ալ
պէտք է զաւակներնուն քով առասպել խօս-
քեր չի հանեն բերաննուն, ըլլալու չըլլա-
լու տեղեր չի տանին, մինակ իրենց գլխուն
անվայել ընկերներու հետ հեռու տեղեր
սրտուելու թող չի տան, այլ ինչ որ ընեն
կամ ընել տան՝ պէտք է համեստութեամբ
ըլլալ, և թէ որ զաւակներնին պարտալ ժա-
մանակնին իրենց սերտողութիւնները կամ
պիտանի գործերնին չընելով ասանկ պղտիկ
պակասութիւններու մէջ անգամ գտնուե-
լու ըլլան, պարտաւոր են հոգաբարձունե-
րուն կամ վարժապետին ծանուցանել :

17. Բնաւ մէկ տղայ մը իշխանութիւն
չունի մէկ ուրիշին անարգական բաներ ը-
նելու, մինչև անգամ սիրտ կոտրելու պրզ-
տիկ բառ մը անգամ արտասանելու, այլ
միշտ իրարու հետ քաղաքականաբար պիտի
տեսնուին կամ խօսակցին, որ պղտիկուց սո-
վորին :

18. Առանց վարժապետին գիտութեա-
նը մէկ տղայ մը ուզած գիրքը չի պիտի կրը-
նայ կարդալ, կամ որոշուած գրքերէն ՚ի զատ
ուրիշ գիրք որ կարդալ ուզեն՝ վարժապե-

տին պիտի ցըցունեն , և թէ որ հրաման տայ
նէ պիտի կարգան :

19 . Աշակերտները իրենց ամէն կերպ
վարմունքներուն շատ զգոյշ պիտի գըտնը-
վին ամէն տեղ թէ մեծերու քով և թէ
պզտիկի , թէ տան մէջ , թէ եկեղեցիի , թէ
փողոցներու և թէ վարժարանին մէջ :

20 . Ամէն երեկոյ երաժիշտ վարժապե-
տը պէտք եղածին չափ տղայ ժամերգութեան
տանելէն ետև կրկին դպրոց պիտի բերէ , և
այս ժամանակս դասերը լրացած ըլլալով
արձակում պիտի ըլլայ :

21 . Ամէն երեկոյ՝ երեկոյեան աղօթքէն
ետև , արձակումէն առաջ կառավարիչ վար-
ժապետը իւրաքանչիւր կարգին կարգապետ-
ներէն պիտի տեղեկանայ ամէն մէկ տղին
վարքը :

22 . Երբ որ տղաքը վարժարանէն կ'ար-
ձակուին , համեստութեամբ տուն հասնել-
նուն պէս քիչ մը հանգստանալէն ետև ըզ-
բօսանքնին պիտի ըլլայ օրական դասերնուն
վրայ որոճալ , գիր գրել թէ որ ունին նէ ,
կամ համարը սերտել կամ գոնէ պիտանի
գրքեր կարգալ :

23 . Այս կանոնագրութիւնը թէպէտև
հիմակուհիմա կարճառօտ է , այլ մէկ տը-
ղու մը բարեվարքութեանը , ուսմանը և
ամէն սարագայներուն վերաբերեալ բո-
լոր կանոնները , կարճ կերպով մը բովանդա-

կած ըլլալուն համար, այս կանոններուն դէմ շարժող տղայ մը մեծապէս պատիժ պիտի կրէ թէ վարժապետներէն և թէ հոգաբարձուներէն, և քննութեան օրերը իրենց ուսմանը հետ վարուց օրագիրերնին ալ քննըվելով անարգանք կը կրեն և պարզերես ելլալու տեղը սեւերես կ'ելլեն :

24. Եւ թէպէտ վարժարանին տղոցը համար քերականութիւն սկըսած օրերնէն ուսումնականութեան կարգը մտած ըլլալով, գրեթէ ծեծը ֆալսխանը վերցած է, այլ ուսումնական պատիժներ ունին որ ծեծէն գէշ են, ինչպէս են, իր կարգին մէջը երթալով վար ինջնալով ամէնէն վար նստիլ մինչև հասարակ ընթերցանութեանց կարգը անցնիլ, յանցանքը տախտակի մը վրայ գրած վիզը կախուիլ, սովորական պատիւներէն և աստիճաններէն զրկուիլ, մինչև հիւր մըն ալ գալու ըլլայ այս պատիժները տեսնալ, և այլն և այլն, ուստի այսչափ ծանուցումէն ետև գէշէն հեռու կենալ աղէկին հետեւիլն ալ տղոց ձեռքն է :

Վ Ճ Ի Ռ Ք

Սամիկոնեան ընկերութեան և անոր
Վարդ Պատրիկեան վարժարանին սա կանոն
նագրութիւնը պէտք եղած քննութիւններ
րով գրուելէն ետև ամէն մէկերնիս ալ մեր
ստորագրութեամբը հաստատուցինք :

Խորհրդական անդամս
Ընկերութեան :



Սէր տեսաք զայս կանոնագրութիւն
Սամիկոնեան ընկերութեան և հաստատու
ցաք մերով ստորագրութեամբ և կնքով .

Պ. Կ. Յուրթ
Արշակիսիպոս
(Կնիք Պարտիարժական)

Ի Պարտիարժարանս
ասենայն Հայոց
Դ Խոմաբոս :
1 Յունիս 1849 .



